

## Ոչ պաշտոնական թարգմանություն

## Պաշտոնականը՝ անգլերեն

### Նախնական խթագրություն

### Վեհաժողովի 1609 (2008) բանաձևի կատարումը Հայաստանի կողմից

#### Բանաձև 1620 (2008)<sup>1</sup>

1. Խորհրդարանական վեհաժողովը 2008 թ. ապրիլի 17-ին ընդունեց 1609 (2008) բանաձևը Հայաստանում ժողովրդավարական ինստիտուտների գործառույթի վերաբերյալ: Նշված բանաձևում Վեհաժողովը թվարկել էր Հայաստանում նախագահական ընտրություններին հաջորդած քաղաքական ճգնաժամի հաղթահարման համար անհրաժեշտ չորս կոնկրետ պահանջներ.

1.1. Եվրոպայի խորհրդի՝ “Իրավունքի միջոցով ժողովրդավարության” հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) առաջարկներին համահունչ, ուժը կորցրած ճանաչել “Ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին” օրենքում 2008 թ. մարտի 17-ին կատարված փոփոխությունները,

---

<sup>1</sup> 2008թ. հունիսի 25-ի Վեհաժողովի քննարկումները (24-րդ նստաշրջան) (տես թիվ 11656 փաստաթուղթը, Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների կողմից պարտավորությունների կատարման հանձնաժողովի (Մոնիտորինգի հանձնաժողով) զեկույցը, համագեկուցողներ՝ պրն Կոլմբյե և պրն Պրեսկոտ): Փաստաթուղթն ընդունվել է Վեհաժողովի կողմից 2008թ. հունիսի 25-ին (24-րդ նստաշրջան):

1.2. Անհապաղ նախաձեռնել 2008 թ. մարտի 1-ի իրադարձությունների և դրանց հանգեցրած հանգամանքների անկախ, թափանցիկ և վստահելի հետաքննություն,

1.3. ազատ արձակել բոլոր այն անձանց, ովքեր կալանավորվել են առերևույթ արհեստական և քաղաքական շարժառիթներ ունեցող մեղադրանքներով և անձնապես չեն կատարել որևէ բռնի գործողություն կամ ծանր հանցանքներ,

1.4. Հայաստանում գործող բոլոր քաղաքական ուժերի միջև նախաձեռնել բաց և լուրջ երկխոսություն Բանաձևի 8-րդ կետում Վեհաժողովի պահանջած այն բարեփոխումների վերաբերյալ, որոնք առնչվում են քաղաքական համակարգին, ընտրական գործընթացին, լրատվամիջոցների ազատությանը և բազմակարծությանը, հավաքների ազատությանը, դատական համակարգի անկախությանը և ոստիկանության գործելակերպին:

2. 1609 (2008) բանաձևում Վեհաժողովը եզրակացրեց, որ Հայաստանի՝ որպես Եվրոպայի խորհրդի անդամ պետության վստահելիությունը հայտնվում է կասկածի տակ այնքան ժամանակ, քանի դեռ վերոհիշյալ պայմանները չեն ապահովվել, և, այդ պատճառով, որոշեց 2008 թ. հունիսյան նստաշրջանի բացման ժամանակ դիտարկել Վեհաժողովում Հայաստանի պատվիրակության քվեարկելու իրավունքները կասեցնելու հնարավորությունը, եթե մինչ այդ վերոնշյալ պահանջների ուղղությամբ ձեռք բերված չլինի զգալի առաջընթաց:

3. Վեհաժողովը ողջունելի է համարում այն հանգամանքը, որ 1609 բանաձևի ընդունումից անմիջապես հետո իշխանությունների մի քանի բարձրաստիճան ներկայացուցիչներ, այդ թվում՝ Հանրապետության Նախագահը և Ազգային ժողովի նախագահը, հրապարակայնորեն նշեցին, որ ունեն քաղաքական կամք և մտադրություն՝ բավարարելու Վեհաժողովի պահանջները:

4. Ինչ վերաբերում է 1609 բանաձևում թվարկված պահանջների՝ իշխանությունների կողմից կատարմանը, ապա Վեհաժողովը.

4.1. Ողջունում է “Ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին՝ օրենքում փոփոխություններ կատարելու մասին” օրենքի ընդունումը Եվրոպայի խորհրդի չափանիշներին համահունչ և համարում, որ այդ առումով Վեհաժողովի ներկայացրած պահանջն իշխանությունների կողմից կատարվել է,

4.2. Կրկնում իր այն պահանջը, որ Հայաստանում պրակտիկայում պետք է երաշխավորվի հավաքների ազատությունը: Ուստի, Վեհաժողովը պնդում է, որ Հայաստանի իշխանությունները պետք է համաձայն «Ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին» օրենքի երաշխավորեն, որ անհարկի սահմանափակումներ չկիրառվեն ընդդիմության կողմից կազմակերպվող հանրահավաքների վրա՝ հատկապես հանրահավաքների անցկացման վայրերի առումով: Այդ առումով, Վեհաժողովը ողջունում է այն փաստը, որ 2008 թ. հունիսի 20-ին ընդդիմության կազմակերպած հանրահավաքն առանց խոչընդոտների տեղի ունեցավ,

4.3. Ողջունում է այն հանգամանքը, որ, թեև շատ ուշ փուլում, սակայն՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում ստեղծվեց ժամանակավոր հանձնաժողով, որը պետք է «հետաքննի 2008 թ. մարտի 1-ի և 2-ի իրադարձությունները և դրանց հանգեցրած պատճառները»,

4.4. Ողջունում է այն հանգամանքը, որ հետաքննող հանձնաժողովը հնարավորություն ունի իր աշխատանքին մասնակցելու նպատակով հրավիրել տեղացի և միջազգային փորձագետների, որը պետք է որ ավելի վստահելի դարձնի իրականացվող քննությունը,

4.5. Համարում է, որ հաշվի առնելով, որ հետաքննող հանձնաժողովն ընդամենը վերջերս է կազմավորվել, Վեհաժողովը չի կարող այս պահին գնահատել անկախության, թափանցիկության և վստահելիության չափորոշիչները: Վեհաժողովը նաև հարկ է համարում նշել, որ հանձնաժողովի ձևաչափը և կազմն ինքնին չեն երաշխավորում հանձնաժողովի անկախությունը և անկողմնակալությունը, ուստի նաև՝ դրա վստահելիությունը հայաստանյան հանրության տեսակետից: Հետևաբար, Վեհաժողովը համարում է, որ պետք է բավարարվեն հետևյալ պայմանները.

4.5.1. Որպես կանոն, հանձնաժողովը պետք է ձգտի աշխատել կոնսենսուսի սկզբունքով և քվեարկությունը պետք է օգտագործվի միայն որպես վերջին միջոց, հատկապես այն խնդիրների շրջանակի առնչությամբ, որոնք հանձնաժողովը ցանկանում է քննել, և այն անձանց հարցում, ում հանձնաժողովը ցանկանում է լսել: Հանձնաժողովի գործունեության համար որպես օրինակ պետք է ծառայեն Ընտրական օրենսգրքի բարեփոխման նպատակով Ազգային ժողովում ստեղծված աշխատանքային խմբի աշխատանքային

մեթոդները, որն իր որոշումները, որպես կանոն, կայացնում է խորհրդակցական ձայնի հիմունքներով,

4.5.2. Հանձնաժողովի լիազորությունների մեջ պետք է հատակորեն նշված լինի, որ այն իրավունք ունի քննել 2008 թ. մարտի 1-ի իրադարձություններին հանգեցրած հանգամանքները, ինչպես նաև՝ անմիջապես դրանց հաջորդած իրադարձությունները, հատկապես ընդդիմության ակտիվիստների կալանավորման և նրանց ներկայացված մեղադրանքների առումով,

4.5.3. Մարդու իրավունքների պաշտպանը պետք է ի պաշտոնե հրավիրվի մասնակցելու հանձնաժողովի աշխատանքին խորհրդակցական ձայնի իրավունքով,

4.6. Կոչ է անում բոլոր քաղաքական ուժերին կառուցողաբար մասնակցել հետաքննող հանձնաժողովի աշխատանքին,

4.7. Ողջունում է վերջին զարգացումներն այն անձանց ազատ արձակման առնչությամբ, ովքեր կալանավորվել են առերևույթ արհեստական և քաղաքական շարժառիթներ ունեցող մեղադրանքներով և անձնապես չեն կատարել որևէ բռնի գործողություն կամ ծանր հանցանքներ: Այնուհանդերձ, Վեհաժողովը համարում է, որ այս խնդրի կապակցությամբ ձեռք բերված առաջընթացը բավարար չէ՝ ապահովելու Վեհաժողովի պահանջների լիարժեք կատարումը: Բացի այդ, Վեհաժողովը համարում է, որ.

4.7.1. Այն գործերը, որոնք դեռ քննության փուլում են, պետք է փակվեն, կամ արագ կերպով ուղարկվեն դատարան՝ ապահովելու համար ողջամիտ ժամկետներում արդար դատաքննության իրավունքը՝ համաձայն Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի,

4.7.2. Այն անձանց նկատմամբ հարուցված գործերը, ովքեր հիմնականում մեղադրվում են քրեական օրենսգրքի 300 և 225 հոդվածներով նախատեսված հանցագործությունների կատարման մեջ, պետք է կարճվեն, բացառությամբ երբ առկա են հիմնավոր ապացույցներ առ այն, որ մեղադրյալներն անձնապես կատարել են բռնի գործողություններ կամ հրամայել, դրդել կամ օժանդակել են դրանց կատարմանը,

4.7.3. Ընդունելի չի կարող լինել այն դատավճիռը, որը հիմնված է բացառապես մեկ ոստիկանական ցուցմունքի վրա՝ առանց լրացուցիչ հիմնավորող ապացույցների,

4.7.4. Ազգային ժողովը պետք է ի գիտություն ընդունի Վենետիկի հանձնաժողովի բացասական կարծիքը Քրեական օրենսգրքի 225, 225(1), 301 և 301 (1) հոդվածներում առաջարկված փոփոխությունների վերաբերյալ:

4.8. Ողջունում է իշխանությունների ստանձնած մի շարք նախաձեռնությունները Վեհաժողովի պահանջած բարեփոխումների շուրջ երկխոսություն սկսելու ուղղությամբ,

4.9. Ընդգծում է, որ Ընտրական օրենսգրքի բարեփոխման նպատակով Ազգային ժողովում ստեղծված աշխատանքային խմբի գործելակերպը կարող է օրինակ ծառայել Վեհաժողովի պահանջած այլ բարեփոխումների շուրջ երկխոսություն իրականացնելու համար,

4.10. Կոչ է անում բոլոր քաղաքական ուժերին՝ իշխանությունների ընձեռած հնարավորությունից օգտվելով ներգրավվել բարեփոխումների շուրջ այն բաց, կառուցողական և լուրջ երկխոսությանը, որը պահանջվում է Վեհաժողովի կողմից:

4.11. Ինչ վերաբերում է ընդդիմության կողմից 1609 բանաձևում շարադրված պահանջների կատարմանը, Վեհաժողովը.

4.11.1 ափսոսում է, որ ոչ բոլոր ընդդիմադիր ուժերն են ճանաչել Սահմանադրական դատարանի որոշումը, որը հաստատեց Կենտրոնական ընտրական հանձնաժողովի հրապարակված ընտրության արդյունքները,

4.11.2 ափսոսանքով է նշում, որ այդ նախաձեռնությունների մշակման գործընթացին ընդդիմության մասնակցությունը որոշակիորեն սահմանափակ է եղել՝ նաև պայմանավորված իշխանությունների հետ երկխոսությունը բոյկոտելու ընդդիմության որոշմամբ,

5. 2008 թ. մարտի 1-ի իրադարձությունների առնչությամբ ընդդիմության կողմնակիցների կալանավորումը և նրանց նկատմամբ մեղադրական դատավճիռների արձակումը վիճահարույց հանգամանք կլինի, որը կշարունակի լարվածություն առաջացնել ընդդիմության և իշխանությունների միջև հարաբերություններում և կարող է խոչընդոտել Հայաստանում անհրաժեշտ բարեփոխումների շուրջ կառուցողական

երկիսուսության ծավալումը: Ուստի, Վեհաժողովը կոչ է անում Հայաստանի իշխանություններին, որպեսզի դիտարկեն, որպես բարի կամքի արտահայտում, առկա բոլոր իրավական միջոցները, ներառյալ համաներումը, ներման հրամանագրերը կամ մեղադրանքներից հրաժարումը 2008 թ. մարտի 1-ի և 2-ի իրադարձությունների կապակցությամբ կալանավորված կամ դատարանի կողմից դատավճիռներ արձակած բոլոր անձանց նկատմամբ, բացառությամբ նրանց, ովքեր անձնապես կատարել են բռնություններ կամ հրամայել, դրդել կամ օժանդակել են դրանց կատարմանը կամ նրանց, ովքեր կատարել են այլ լուրջ հանցագործություններ՝ հասարակությունում վստահության ձևավորման և բոլոր քաղաքական ուժերի միջև երկուսուսության խթանման նպատակով:

6. Վեհաժողովը վերահաստատում է, որ Հայաստանում կա բազմակարծ էլեկտրոնային լրատվամիջոցների համար նպաստավոր միջավայրի անհրաժեշտություն և, անդրադառնալով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի “Ա1+” հեռուստատեսությանը հեռարձակման արտոնագիր չտրամադրելու վերաբերյալ դատավճռին, կոչ է անում արտոնագրեր շնորհող մարմինն այժմ ապահովել արտոնագրման բաց, արդար և թափանցիկ ընթացակարգ՝ համաձայն 2008թ. մարտի 26-ին Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի կողմից ընդունված ուղենիշների և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի:

7. Վեհաժողովը ողջունում է 1609 բանաձևում Վեհաժողովի արտահայտած պահանջները բավարարելու ուղղությամբ Հայաստանի իշխանությունների ձեռք բերած առաջընթացը: Այնուհանդերձ, չնայած իշխանությունների հայտնած քաղաքական կամքին, այդ առաջընթացը տվյալ պահին անբավարար է՝ կատարված համարելու բանաձևում թվարկված պահանջները:

8. Ափսոսանք հայտնելով իր պահանջները կատարելու ուղղությամբ կոնկրետ միջոցառումների իրականացումն ուշացնելու կապակցությամբ, Վեհաժողովն ընդունում է այն փաստը, որ Հայաստանի իշխանություններին տրամադրված ժամանակը կարճ էր: Ուստի, Վեհաժողովը որոշում է կայացնում իր 2009 թ. հունվարյան նստաշրջանի ընթացքում կրկին անդրադառնալ 1609 բանաձևում շարադրված պահանջների Հայաստանի կողմից կատարման առաջընթացի խնդրին: Եթե 1609 բանաձևում և սույնի 4.2., 4.5, 4.7 և 6 կետերում նշված պահանջներն այդ ժամանակ կատարված չլինեն, ապա Վեհաժողովը 2009 թ. հունվարյան նստաշրջանի բացման ժամանակ կդիտարկի Վեհաժողովում Հայաստանի պատվիրակության քվեարկելու իրավունքները կասեցնելու հնարավորությունը:

9. Վեհաժողովն առաջարկում է.

9.1. Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին՝ արագացնել Երևանում Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարի նոր Հատուկ ներկայացուցչի (ԳՔՀՆ) նշանակման գործընթացը և Երևանում ԳՔՀՆ գրասենյակի միջոցով մշտապես կապ պահպանել հետաքննող հանձնաժողովի հետ,

9.2. Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների հանձնակատարին՝ ներդրում ունենալ 2008 թ. մարտի 1-ի և 2-ի իրադարձությունները և դրանց հանգեցրած հանգամանքներն հետաքննող Ազգային ժողովի հանձնաժողովի աշխատանքին միջազգային փորձագետների մասնակցությանը, եթե բավարարվեն անկախության, թափանցիկության և վստահելիության պայմանները: Վեհաժողովը հրավիրում է Մարդու իրավունքների հանձնակատարին 2008թ. սեպտեմբերի հանդիպմանը տեղեկացնել Մոնիտորինգի հանձնաժողովին հետաքննող հանձնաժողովի կողմից արձանագրված առաջընթացի, ինչպես նաև կալանավորված անձանց ազատման գործընթացի վերաբերյալ:

10. Վեհաժողովը կշարունակի Մոնիտորինգի հանձնաժողովի կողմից տրամադրվող տեղեկությունների հիման վրա ուշադրությամբ հետևել Հայաստանում տիրող իրավիճակին, հատկապես՝ վերոհիշյալ պահանջների կատարման ուղղությամբ առաջընթացին: